



ՓԱՅՆԱԿ ԾԻԱԾԱՆ

«Սևանն հեղեն է կապույտ...»:

Զ. ԱՏՈՒՐՄԵԼՅԱՆ

## Ս Ե Վ Ա Ն Ը

Երբ Հայրենիքն իմ լույս տեսիլների տանար է եղել,  
Եվ կյանքը մարդու եղել է այնտեղ տրտում պատարագ,  
Ժողովուրդն իմ ողջ իջել է ծեփի և աղոթք ասել,  
Մինչ աչքերի մեջ արցունքն է կիզվել կայլակ առ կայլակ...

Մեր աստվածամերձ հսկա լեռների սուրբ սկիհի մեջ,  
Սևանն է եղել այդ պատարագի գիւնին ծփծփուն,  
Որ մեր «Հայր մեր»-ի տրտում շեշտի հետ դարերով անվերջ,  
Ընծա ենք բերել մեր ծիր պապերի հզոր Աստծուն...

Ու կղզին այնտեղ երբեմն գմբուխա, երբեմն էլ ոսկի,  
Իր զույգ վանքերի տարորեն հուզիչ սրբուրյանը հետ,  
Նշխարն էր օրհնյալ բախիժով օծուն հայ պատարագի,  
Որ մեր սև ժամին հաղորդել է մեզ հույսով լուսավետ:

Սևանը կապույտ դարերի մթին բանձրության միջից,  
Իր ալիքների մրմունջների հետ բերել է լոին  
Միշտ պատարագվող իմ ժողովրդի երգը բախձալից,  
Եվ անցյալ վերքի որպես տխուր հուշ հանձնել դարերին....:

\*\*\*

Երբ Հայրենիքն իմ ոստան է դարձել անսպառ բերքի,  
Ու կյանքը այստեղ եղել է այսօր անանց խնդություն,  
Երբ ժողովուրդն իմ արդար վաստակով հասել է փառքի,  
Եվ իր հոգու մեջ շենջող հույզների պարերգ է ցնծուն,

Մեր գրանիտյա ու սեգ լեռների շինջ բաժակի մեջ  
Սևանն ալեծուփ հորդել է ինչպես խնդության գիւնի,  
Եվ մեր նվաճմանց շառաչուն փառքը շողացրել անվերջ,  
Որ հպարտ լինի ստեղծող հոգին ամեն մի հայի...

Ու գիւնին կապո՛ւյտ՝ կապո՛ւյտ ջրերը շփնաղ Սևանի  
 Լույս են նառագում օրհնյալ հարկի տակ ամեն մի հայ տան,  
 Ու թ են պարզևում կենսավետ վազֆին բյուր անիվների,  
 Ու մեր արտերում անսպառ լինի երգը խնդության...

Սևանը հույս է. նա երջանկավետ կյանք է մեզ համար,  
 Սևանը զուլալ վարար աղբյուր է անհուն ցնծության,  
 Սևանը հույզ է, իմ ժողովրդի երազն է պայծառ,  
 Սևանի երգը բարի խաբրիկն է հայ երկրի զարնան...:

\*\*\*

Ուր էլ որ լինի Սևանը խոհուն ու կապուտաշվի,  
 Մեր վեհ լեռների սուրբ սկիհի մեջ, քե ջիւնջ բաժակում,  
 Ոգի կտա մեզ, կտա մեզ սուրբ հաց ու կտա գինի,  
 Ու հայ տանարում լինի պատարագ և Հայոց երկրում  
 Խնդության լինի...:

